ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2026 թվականի թիվ 117 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 180-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն և 2026 թվականի փետրվարի 19-ի թիվ 180-Ն որոշումն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 19-ի թիվ 180-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 1-ին կիսամյակի համար հատկացված 370000,0 հազար դրամ գումարից՝ 28911,679 հազար դրամ վճարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին և 12344,089 հազար դրամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ մարզի սահմանամերձ համայնքների բնակավայրերի էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից 2026 թվականի մայիս ամսում սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

Հայաստանի Հանրապետության

Տավուշի մարզպետ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-06-19 14:18:07 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. հունիսի 19

ք. Իջևան